Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ՀՈԳԵԼՈՒՅՍ ՌՈԲԵՐՏ ՄԱՎԻՍԱԿԱԼՅԱՆԻ ՍԳԱԿԻՐ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Սրտի խոր ցավով տեղեկացանք մեր Եկեղեցու արժանավոր զավակ Ռոբերտ Մավիսակալյանի անժամանակ մահվան մասին: Հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության Մեր անկեղծ վշտակցությունն ենք բերում հանգուցյալի այրուն, ընտանիքի անդամներին, բոլոր հարազատներին ու մերձավորներին:

Շնորհաշատ լրագրողի անունը թանկ ու սիրելի է մեր ժողովրդին, որ երկար տարիներ առիթն ունեցավ հեռուստաթերից լսել նրա խոսքը՝ մտահոգված հասարակական խնդիրներով, նախանձախնդիր Հայաստանի անկախության վերականգնմամբ ու առաջընթացով: Մեր լրագրողական պատմության մեջ նա միշտ պիտի հիշվի մտավորական իր նկարագրով, ով իր հայրենասեր ու ազնիվ հոգու ողջ եվիրումը ներդրեց իր գործունեության մեջ՝ իբրև ծառայություն Հայրենիքին ու իր ժողովրդին:

Առ Աստված սրտաբուխ աղոթքով հայցում ենք, որ Տերն Իր արարչական սիրով երկնային բարձունքներում ընդունի իր հավատավոր ծառայի լույս հոգին և հավիտենական հանգստություն պարգևի երանական խաղաղության մեջ: Թող Տերը Սուրբ Հոգու շնորհով մխիթարություն ու սփոփանք պարգևի Ձեզ և Ձեր բոլոր հարազատներին:

Խունկ և Աստվածային օրհնություն Ռոբերտ Մավիսակալյանի բարի հիշատակին:

Վշտակից սիրով և
Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
31 հոկտեմբերի 2003 թ.